

**Հաստիք՝** Սնանկության և դատական ներկայացուցչության գործերով զբաղվող իրավաբան:  
**Հնարավոր թեկնածուներ՝** փաստաբանական գործունեության արտոնագիր ունեցող և ներկայացվող պահանջներին համապատասխանող շահագրգիռ անձ:

**Աշխատանքի սկիզբ՝** հնարավորինս շուտ:

**Աշխատանքի տևողություն՝** անորոշ ժամկետով՝ ներառյալ փորձաշրջանը:

**Աշխատանքի վայր՝** Երևան, Հայաստան:

**Աշխատանքի նկարագրություն՝** Ընկերությունը աշխատանքի է հրավիրում Սնանկության և դատական ներկայացուցչության գործերով զբաղվող իրավաբանի հաստիքին հավակնող, մասնագիտական փորձ ունեցող անձանց: Դիմողը պետք է իրազեկ լինի Ընկերության գործունեության և մասնագիտացման ոլորտների վերաբերյալ:

**Աշխատանքային պարտականությունները՝**

1. Սնանկության և իրավունքների դատական պաշտպանության ոլորտներում Ընկերության հաճախորդներին իրավական խորհրդատվության ծառայությունների մատուցում,
2. Ընկերության հաճախորդների շահերի պաշտպանություն վարչական, սնանկության, դատական վարույթներում,
3. Հայցադիմումների, բողոքների և այլ դատավարական և իրավական փաստաթղթերի կազմում քաղաքացիական, վարչական վարույթների բոլոր փուլերում, ՀՀ բոլոր դատարաններում,
4. Առաջացող խնդիրների կապակցությամբ ուսումնասիրությունների կատարում, իրավական գնատականների և խորհրդատվության տրամադրում:

**Պահանջվող հմտությունները՝**

1. Իրավունքի բակալավրի աստիճան. իրավունքի մագիստրոսի աստիճանը կդիտվի որպես առավելություն,
2. ՀՀ սնանկության օրենսդրության կատարյալ իմացություն,
3. ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի կատարյալ իմացություն,
4. ՀՀ քաղաքացիական և վարչական օրենսդրության իմացություն, ՀՀ քրեական օրենսդրության իմացությունը կդիտվի որպես առավելություն,
5. ՀՀ դատարաններում ներկայացուցչության իրականացման առնվազն երկու տարվա փորձի առկայություն,
6. Փաստաբանական գործունեության արտոնագրի առկայություն,

7. Համակարգչային ծրագրերի լավ իմացություն՝ MS Office (այդ թվում՝ MS Excel) և G Suite, հայերեն և օտարալեզու իրավական աղբյուրներ, Համացանց, էլեկտրոնային նամակագրություն և այլն,
8. Հայերենի հիանալի իմացություն, ռուսերեն և/կամ անգլերեն լեզուների իմացությունը կդիտվի որպես առավելություն,
9. Անգլերեն իրավական եզրույթների իմացությունը, ինչպես նաև անգլերեն իրավական փաստաթղթեր (աուտենտիկ երկլեզու փաստաթղթեր/պայմանագրեր) կազմելու փորձի առկայությունը կդիտվի որպես առավելություն,
10. Պատասխանատվության բարձր զգացում, ճշտապահություն, **հաղորդակցվելու և բանակցելու հմտություններ**, ճնշման տակ աշխատելու ունակություն:

**Վարձատրություն/աշխատավարձ՝** շուկայում մրցակցային/բանակցային:

**Դիմելու կարգը՝** շահագրգիռ անձինք կարող են ներկայացնել ինքնակենսագրական [career@dialog.am](mailto:career@dialog.am) էլեկտրոնային փոստին՝ նամակի վերնագրում նշելով «Մնանկության և դատական ներկայացուցչության գործերով զբաղվող իրավաբան» կամ “Bankruptcy and Litigation Associate”: Ընկերությունը կապ կհաստատի միայն այն հավակնորդների հետ, որոնց հետ որոշվել է անցկացնել հարցազրույց:

**Ընկերության մասին՝** «Կոնցեռն-Դիալոգ» ՓԲԸ-ն իրավախորհրդատվական ընկերություն է, որը մատուցում է իրավական ծառայություններ տեղական և օտարերկրյա հաճախորդներին իրավունքի ամենատարբեր ոլորտներում: Լրացուցիչ տեղեկատվության համար կարող եք այցելել [www.dialog.am](http://www.dialog.am) կայքը:

Դիմել մինչև 10.02.2019